

յետոյ վարդապետ եւ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, վասն զի տարբեր ժամանակ մը 1676—1689 Տինգ անգամ Պատրիարք եղած է, առանց Զաքարիայի մը յաջորդած ըլլալու, կարելի է թերեւս որ նամակս ուղղուած էր Գրիգոր վ. Պասմաճեանի: Երկու դէպքին ալ նամակս կարեւոր ըլլալուն՝ ամբողջապէս հոս կը հրատարակեմ.

«Ստամպուլու վեց եկեղեցւոյ. քահանայիցն եւ միաբան ժողովրդենէ. հասցէ շատ կարօտով ողջոյն հօրն մերոյ սուրբ հայրն մեր Տէր Գրիգոր վարդապետին. առաջնորդ եւ խաշանց բանականաց. գլուխ եկեղեցւոյ. ախոյեան հաւատոյ. պարիսպ քրիստոնէից. եւ կարկիչ անհաւատից. հովապետ հօտին տիրական. ըստուն նազելի. եւ ամենեցուն գովելի. շքեղաշուք շնորհալի. ի փառաց զարդուն նոր սիոնի. բոլորից տենչալի. եւ համայնից բաղձալի. գերամաքուր եւ ամենայն շնորհօք ի լի. բազմերջանիկ սուրբ հայրն մեր. տեառն տէր Գրիգոր քաջ ըստունապետիդ: Ի հեռաստանէ իբր զմօտոյ մեծաւ փափաքանօք եւ ջերմեռանդ սիրով համբուրելով համբուրեմք զուրբ գարշապարդ. եւ շնորհակալ եմք ի քոյին սրբութենէդ. եւ հարցանելով հարցանեմք զքեզ ի բարին: Եւ թէ զմեր անարժանութիւնս հարցման արժան առնէք նա. եւ եմք տկար հոգով. եւ առողջ մտրմնով. ձերում սուրբ աղօթիւքդ: Եւ արդ արժանապատիւ սրբութեանդ ծանուցումն լիցի քեզ տէր վարդապետ որ զաքարիայն՝ որ մանգուլ եղաւ շատ նեղութիւն եւ չարչարանք եղել մեզ, որ լուեալ էք բազմաց՝ որ զեկեղեցիքն. շատ բտտակէն փողէն հանեցին. ապա ի մենէ պատրիարք ուղեցին. մեր միտքն. ի մեր կամքն ի հրամանքն էր. ապա մէկ հեղէ ի հրամանուցդ անունն յիշելոյ